

է՛ չգտնելով մէջտեղ ուրիշ ո՛ր և է հաստա-
տուն կոտան մը:

Այս տարբերակներն հրատարակած ա-
տեննիս ուրախ ենք ըսելու՝ որ յիբաւի
մէկ երկու անստուգութիւններ՝ ինչ որ
զիտած է « ՀԱՆԴԻՍ » ի հրատարակիչն ալ՝
կը գտնեն այսու իրենց լուսարանութիւն-
ները: Կարգաւ կը դնենք հոս մեր կատա-
րած համեմատական տեսութիւնները:

ա — Հ. (= « ՀԱՆԴԻՍ ԱՄՍ. » ի բնագիր).
Տես զի միշտ հանապազ սրէր գտնեն և զգէն
իւր.. (տող 30): | (Ասիկա Հ. վարդապետի
կողմանէ սրբազրուած ձեւն է. մինչ՝ հետեւելով
ստորեւ. դրած իւր իրանօրէնքն՝ բուն օրինակը
կը ձեւանայ այսպէս. միշտ հանապազ ս ու է ի
և գ Տ է ի և զգէն իւր | — ձ. (= ձԱՌԴՆ-
ՏԻՐ Գ.) այդ մասը պայծառօրէն այսպէս կը
դնեն. միշտ և հանապազ ս Ր է ի և գ տ է ի | « գտնել »
բայէն | զգէն իւր:

բ — Հ. գտնեն իւր օրինակ բանիցն ցուցանէր.
(տող 50-51): — ձ. — գիւր անն օրինակ բա-
րի..:

գ — Հ. Հայեցումք աչացն լի էին զգաստու-
թեամբ. տեսիլ իւր անագին (տ. 51-52): — ձ.
... զգաստութեամբ (նոս յաւելու) և բուռն և
խիստ էր հերձուածողաց. տեսիլ իւր անագին..:

դ — Հ. ոչ պատկառէր ի փրնախնդիր քսութե-
նէ (տող 60): — կը տարբ. քննութենէ:

ե — Հ. ոչ երբեք երևել խոնարհ առ խաբէու-
թիւն (տող 64): — ձ. չունի խոնարհ:

զ — Հ. Զծերս ուսուցանէր ուսմամբ վարդա-
պետութեամբ և զտղայս իբրև զգայեակ ընդ
թեւաք զրգանաց սնուցանէր. (տ. 65-67): —
ձ. ... ուսմամբ վարդապետութեան. (չունի
զրգանաց):

է — Հ. քանզի գործք մարմնաւորք ոչ երբեք
գտանէր ի նմա (տ. 80): — ձ. կը տարբերի
գործովք:

ը — Հ. և որով ուշ եղեալ նորուն հետս թեա-
կութիւր գնալ (տ. 80): — ձ. կը տարբ. և որում.
(չունի գնալ):

թ — Հ. զամենեսին հանդերձեալ պարգեւաքն
յորդորէր (տ. 94): — ձ. զամենեսեան հանդեր-
ձեալ փառաքն յորդորէր և պարգեւաքն:

ժ — Հ. իբրև զմոզոն ի պողոտայս հաստա-
տեսցին խորհուրդք իւր և ի նաւահանգիստ կե-
նաց անխեթ և աներկիւղ հասանիցէ (տ. 104-
106): — ձ. կը տարբ. հաստատեալ էին.. զի
ի նաւահանգիստ..:

ժա — Հ. ընթացս հաւատարիմս կատարեսցէ
(տ. 107): — ձ. զընթացն հաւատարիմ..:

ժբ — Հ. իբրև գլաղթող նահառակ զարդարէր
պսակաք (տ. 109): — ձ. կը տարբ. զարգար
նահատակ:

ժգ — Հ. զինուն արդարութեամբ թշնամոյն
յաղթէր և զեղարդեամբն ստուգութեամբ իբրև
զգնենէզ զսատանայ խոցոտէր (տ. 110-12): —
ձ. զինուն արդարութեան թշնամեացն յաղթէր և
զեղարտամբն ստուգութեան...:

ժդ — Հ. հանգէս առնէր և ընտրէր և վիհ
մեծ.. գտանէր (տ. 102-104): — ձ. չունի
ընտրէր:

ժե — Հ. ետես.. զբարի վարսն արդարու-
թեան.. զոր ունէր յանձին.. զողորմածութիւնն
առ աղքատսն և զտեսչութիւնն.. արկ փոյթ
յաւաժարութեան.. (տ. 116-119): — ձ. ետես..
և զի ի վարս.. զողորմութիւնն առ աղքատս և
զտեսչութիւնն..:

ժզ — Հ. զի զձայն քաղցր փնարի.. փողոց
շիփորայ (տ. 120): — ձ. զի իբրև զձայն..
փողոց շիփորայ:

ժկ — Հ. իբրև զեղիայ ընկալցի զսուրբ հոգի
բարձրելոյն (տ. 125): — ձ. կը տարբ. զեղի-
շայ:

ժլ — Հ. Զի ի կենդանի բանիցն ընկալցին
զաւգնութիւնս և ի սուրբ աշոյն ընկալցի(ն)
զաւրհնութիւնս (տ. 139-140): — ձ. չունի
զաւգնութիւնս և ի սուրբ աշոյն:

Այսչափ են ահա սոյն երկու բնագիր-
ներուն ցուցադրած ամենէն ցայտուն ու
նշանակելի կէտերը:

Հ. Ղ. Տ.

ԿՈՉՈՒՄՆ “ՓՐԱԽԱՇԻ”

ԱՅՑ ՔՐԻՍՏՈՒՆԵԱՅ ՎԱԿԵՐԱԹՈՒԼԹԻ ՍԵ ՍԷՋ

~~~~~

Ինչպէս յոյն իմաստասիրաց՝ առաքի-  
նութեանց և ախտերուն նկատմամբ տուած  
վճիռներուն հաւաքածոյին մէջ, զոր Ու-  
կեփորիկներուն մէջ կը կարդանք, հաւա-  
քողին զիտումն եղած ըլլալու է՝ ընթեր-  
ցողին առջեւը դնել բարոյական մը՝ որ  
քրիստոնէականին հետ համաձայնի, ջա-  
նալով հրապուրել զինքը խորիմաստ ը-

սուածներով և հետաքրքրական մանրա-  
վէպերով և ճշմարտութեան ապացոյցներ  
առաջ բերելով հեթանոսական աղբիւրներէ.  
այսպէս են Աստուածոսրեան նկատմամբ այն  
վերիններն ալ՝ որ ձեռագիրներուն մէջ աղ-  
բիւրներէն կամ առաջ կամ յետոյ դրուած  
են և սոսկ բարոյական են: Անոնց եւս  
վարձանք շատ տարբեր չէ եղած, որ է  
ցուցնել թէ համաձայնութիւն կայ ինչ ինչ  
հեթանոսական պատգամներուն և քրիս-  
տոնէական վարդապետութեանց մէջ, թե-  
րևս այս ապաժաման վերջահաս հաւաքող-  
ները չեն գիտած՝ որ գնոստիկականութիւն  
կայ այս անհարապատ վերիններուն մէջ,  
Այս նիւթի վրայ խօսեցայ<sup>(1)</sup> արդէն հայ-  
կական պարձեան թիւ 9. գրչագրին վրայ  
զգա՞ծ ծանուցագրիւ, նոյնպէս յոյն վեր-  
ներու հաւաքածոյի մը կատարած ապա-  
գրութեանս մէջ. որուն վերադիրն է յու-  
նարէն Տυμφωνία ἐκ τῶν παλαιῶν φυλο-  
σόφων τῶν Ἑλληνικῶν περὶς ἀγίαν καὶ θεῶ-  
πνευστον νέαν γραφήν.<sup>(2)</sup>

Հայկական նիւթը գէթ մասամբ ինծի  
կ'երեւի որ Ը.րդ դարուն ըլլայ, այսինքն  
Խոսրովու և Հերակլիտի, Պարսից և Բիւ-  
զանդիոնի պատերազմին յաջորդ դարուն,  
մինչ ծագեցան այնչափ խնդիրներ և հեր-  
ձուածներ և բազմազգի դաւանանքներ,  
որ իբրև փոթորկի մը ատեն խորտակեալ  
նաւու մը ջուրին երեսը լողացող բե-  
կորներուն պէս կը ծփային անտէր և ան-  
կազմ. և կը համարիմ որ այս հատուած-  
ներէն մի քանին՝ թէեւ ուշ՝ բայց մտած  
ըլլան Ոսկեփորիկներուն մէջ, զոր հաւա-  
քեր են բարեպաշտ անձինք բոլորովին  
տարբեր դիտմամբ: Ս. Ղազարու Մատե-  
նադարանին ամենէն հին գրչագիրը՝ որ

այս վերինները կը պարունակէ՝ գիտցածիս  
համեմատ՝ է 1108, զ. զ. Թուագիրը  
կրողը, գրուած 1317ին: Ես ատենօք  
համեմատած եմ այս գրչագիրը քննական  
մէկ փորը հրատարակութեանս համար,  
զոր կը յուսամ քիչ ատենէն տպագրել.  
համառոտութեան համար այս գրչագիրը  
պիտի կոչեմ Ա. Յետոյ ա գրով կը նշա-  
նակեմ՝ Աին հետ ունեցած մերձաւորու-  
թեանը պատճառաւ, Ս. Ղազարու 1091,  
ը. բ. գրչագիրը. իսկ Բով կ'իմանամ Ս.  
Ղազարու 1250, է. ա. գրչագիրը՝ որ պոր-  
ճեանին (b) հետ արդեններ ունի:

Ներկայ յօդուածիս մէջ փրատրի բառը  
ուսումնասիրելու պատճառաւ՝ անմիջա-  
պէս կը դնեմ հոս մանրավէպին բնագիրը,  
որ ձեռագիրներու մեծ մասին մէջ այս վեր-  
ներու շարքին մէջ չորրորդ տեղը կը բռնէ:

« Թիւղոս յորժամ պատերազմաւ ըմբռ-  
« նեաց զամենայն երկիր. և եկն յափիր-  
« կէ. և մտեալ ի տունէ զստնակոչաց և  
« զոհեաց. զի ուցի խորհուրդս. և ա-  
« սաց. <sup>(3)</sup> ով երանի՜ փրաւարին <sup>(4)</sup> ան-  
« սուտ. որ զըջմանս ի ներքոյ հաստա-  
« տութեանդ ցածուցանես: Ուսոյ ինձ. ով  
« է <sup>(5)</sup> քան զիս յառաջ կամ զկնի իմ.  
« որ հնազանդ է ամենայն երկիր: <sup>(6)</sup> Պա-  
« տասխանի ետ, և նա <sup>(7)</sup> ասէ. յառաջ  
« քան զքեզ Աստուած է և զկնի քո.  
« և <sup>(8)</sup> Բանն և Հոգին իւր. որ ի միմեանս  
« յարակցեալ <sup>(9)</sup> կան. <sup>(10)</sup> որոյ իշխանու-  
« թիւն յաւիտեանս <sup>(11)</sup> է: Եւ դու որ  
« ուսարդ վաղվադակի մեռանիս. զի ոչ  
« խորհեցար զճանապարհէ՜ քու մէջ բա-  
« րի <sup>(12)</sup> իրս: »

Արդ կ'ուզենք հոս յիշել որ Թուլիս  
անուամբ Թագաւորի մը կը հանդիպինք

(1) Հասուածք յոյն հեղինակներու ծագակարգի մը՝  
որ կը գտնուին Վատիկանի հայ-պորճեան գրչագրի մը  
մէջ. Տեղեկատուութիւն Հոռովմայ, 1914 Dsi Linceis  
Թագ. Տեղեկարարներ. Նիստ 1913ի զեկո. 21ր.

(2) Օրագիր իտալական Ասիական ընկերութեան, 1915.

(3) Ատ է Բ. b.

(4) Փրաւարին Ա, քրաւար Բ.

(5) Է. om. a.

(6) Որ .... երկեր omittunt A, a.

(7) Եւ om. B, b.

(8) Եւ om. a.

(9) Յարակցեալ Ա, b, a pro \* յարակցեալ quod  
antea conieceram scriptura codicis b incerta.

(10) Էւ a tantum.

(11) Յաւիտեան caeteri.

(12) Բարի om. A.

Սուրբաբար քով, որ կ'ըսէ... «οὗτος ἔβα-  
 σίλευσε πάσης Αἰγύπτου». Հայերէնին աւելի  
 մերձ կը գտնեմ Յովհաննէս Մաւրաւսի  
 մէջ բերած պատմութեամբը: (1) μετὰ Ὡρον  
 ἔβασίλευσε Θούλις ὃς παρέλαβε μετὰ δυνά-  
 μεις πολλὰς πᾶσαντὴν γῆν [εἰς τοῦ Ὁκεα-  
 νοῦ. καὶ ἐν τῇ ὑποστρέφειν] ἤλθεν ἐπὶ τὴν  
 Ἀφρικὴν εἰς τὸ μαντεῖον [ἐν ὑπερῷφανίᾳ].  
 καὶ θυσιάσας ἐπυροθάνετο λέγων· Φράσον  
 μοι [πυρισθενές] ἀψευδές, μάκαρ, ὃ τὸν αἰ-  
 θέρειον μετεγκλίνων δρόμον τίς πρὸ [τῆς]  
 ἐμ[ῆς βασιλείας] ἡδυνήθη ὑποτάξαι τὰ  
 πάντα, ἣ τίς μετ' ἐμέ; καὶ ἐδόθη αὐτῷ  
 χρομήτης οὗτος· Πρώτα Θεός, μετέπειτα Λόγος  
 καὶ Πνεῦμα σὺν αὐτοῖς, σύμφυτα δὲ πάντα  
 [καὶ εἰς ἐν ἰόντα], οὗ κράτος αἰώνιον.

Փոփոխութիւնն թերս յատուկ անուան  
 ի թուրքի մեզի կը յիշեցնէ Հերոդոտոսի,  
 (I. 30, 33) պատմած մէկ մանրամասն  
 Սողոմոն Եգիպտոս բրած ճամբորդութեան  
 նկատմամբ: Ամասիս Եգիպտացոց թագա-  
 ւորը Սողոմոն իր ամբողջ հարստութիւնը  
 ցուցնէին ետքը կը հարցնէ՝ թէ իրմէ աւելի  
 զո՞վ երկրին կը համարի. կը պատասխանէ  
 թէ թելուս Աթենացին աւելի երջանիկ էր,  
 վասն զի ինքը բարեբաւստ զաւակներ  
 հասցնելէն վերջ հայրենիքը Ելեւսեանց  
 դէմ պաշտպանելուն ատեն մեռած էր:  
 Յայտնի է որ Հերոդոտոսի պատմութիւնը  
 իր որոշ տարբերութիւններով հանդերձ կը  
 մտնէ նոյն շրջանին մէջ, Եւ յիշուի զու-  
 ջակին պատասխանին կը փոխառնակէ Սո-  
 ղոմոնի՝ իմաստունեկեղեմ միայն՝ պատաս-  
 խանը: Եգիպտացի թագաւորին յանդուգն  
 հպարտութիւնը վերագրած է թելուսի և  
 այս անունն ինքնին թուրքի մէկ զանա-  
 զանակը կը թուի ըլլալ:

Երբեք կարելի չէ տարակոյսի մէջ դնել  
 Մաւրաւսի յոյն հատուածին հային հետ  
 հետ ունեցած կապը. երկու խմբագրու-  
 թեանց ալ նպատակն է ցուցնել աւան-

դական ապացոյց մը՝ ի նպաստ երրորդ  
 դուծեան, անուանած հեթանոս աղբիւրէ:

Հայկական հատուածը յոյնէն աւելի հե-  
 տաբերբերական է իր առ փրաւաշի կոչումով:  
 Կրնայ ըլլալ որ հայը թարգմանած. ըլլայ  
 հասարակաց աղբիւրէ մը, ուսկից ատած  
 ըլլայ նաև Մաւրաւս վերջինս իր գործը  
 վերջացուց Զ. դարուն վերջիս և անոր  
 մէջ հաւաքեց ժողովրդական աւանդու-  
 թեանց մեծ գանձ մը, և Գարբէրի համե-  
 մա՝ Մովսէս Խորենացին ալ անկից քա-  
 ղեց: Մաւրաւսի գործին վրացական թարգ-  
 մանութիւն մը կը գտնուի Ժ. դարուն  
 ձեռագիր մը մէջ պահուած ի թիֆլիս: (2)  
 այս նշանն է թէ Մաւրաւս ծանօթ էր  
 արդէն փոքր Ասիոյ կրթեալ շրջանակնե-  
 րուն:

Չեմ համարիր որ հայ թարգմանիչը  
 «Փրաւաշի» ու՛ր յունականն փրսծեանէս բա-  
 որ թարգմանել ուզած ըլլայ. այս բառը հրե-  
 դէն տարր նշանակելով՝ իրանական հեռաւոր  
 աղբիւրէ ցոլացում մ'ըլլալու է: Այս աղ-  
 բիւրը պէտք է ըլլայ իրաւախոսութիւն մը  
 քրիստոնեայ և պարսիկ գաղափարներու:  
 Հաւանորէն հայ խմբագրութիւնը՝ ըստ  
 որում աչքի առջև ունինք՝ կը բարձրա-  
 նայ մինչեւ այն դարը՝ զոր յօդուածիս  
 սկիզբը յիշատակեցի: Գիտենք արդէն  
 թէ որքան կը կանխէ իսկ իրանական աշ-  
 խարհի ազդեցութիւնը քրիստոնէութեան  
 վրայ մանաւանդ ի հերձուածներով՝ ինչ-  
 պէս են Մանիքէականն և Պաւլոկիեանն,  
 և վերջնոյս նկատմամբ մեծայարգ վկայու-  
 թիւններ ունինք Հայ մատենագրութեան  
 մէջ:

Առ փրաւահր ուղղուած բացատրու-  
 թիւնն ալ «Որ գրչաւս ի ներքոյ հաստատու-  
 րեանց ցածուցանեն (τὸν αἰθέριον μετεγ-  
 κλίνων δρόμον)», կը յիշեցնէ մեզի այն  
 կրօնական աստղային դրութիւնը՝ որ Մա-  
 նիքեցոց և ուրիշ հերձուածներու քով

(1) Patrolog. Graec. Migne vol. 97, pag. 87  
 [26-27].

(2) Հանուած Խախանդի առ Գրուսպար տուած մէկ  
 անգիկութենէն. Geschichte der Byzantinischen Li-  
 teratur, էջ 329.

կար և Մոգութենէ ծագած էր<sup>(1)</sup>։ Ըստ Մագղեականութեան՝ փրաւաշի իւրաքանչիւր անձի և բոլոր բանաւոր էակներուն աստուածային տիպարն է, անոնցմէ առաջ գոյութիւն ունի, արարած է և արարչութեան սկիզբն Արամազդայ, որ կը պահէ և կը պաշտպանէ հաւատացեալը իր կենացը մէջ և մահուանը ատեն հետը կը միանայ։

Ահուրա — Մագղայ ալ ունի իր Փրաւաշին<sup>(2)</sup>, այն որ օգնութեան կոչուած է վերոյիշեալ հաստուածին մէջ և ունի՝ ինչպէս ըսինք վերը՝ աստղային ուժով գոյն մը։

Հայկական բացատրութիւնը չի կրնար անվրէպ սահմանել ժամանակը՝ երբ Փրաւաշի բառն անցաւ հայ բառգիրքին մէջ։ Միայն պէտք է ըսել որ ոչ աւեստեանէն այլ փենիկեանէն առնուած է *فرخش*։

Սալմանի սրանչիի մանիքեական բառգիրքին<sup>(3)</sup> մէջ կը գտնեմ եր. 117 զբուած բառն։ ԻՂՈՂՈՔ երկրային նշանակութեամբ, արարչութեան հինգ տարրերէն առաջինը, ինչպէս կը կարգուէր Fihrist և մանիքեան հաստուածին մէջ՝ զոր կը յիշատակէ Սալման 98. 13. 20 թիւերուն մէջ, երես 16, և այսպէս կերպով մը կը պայծառանայ բառն *آیدرپون* զոր կը գտնենք յիշեալ յոյն հաստուածին մէջ։ Աւելի ուշագրաւ է Փրաւաշին զանազանակը՝ որ կայ A ձեռագրին մէջ. ես չեմ կրնար ընդունիլ զայն իբր կոչական և իբր մանիքեական յոգնակի ձևին օրինակութիւն, այլ կ'ընդունիմ որ ըլլայ տրական հոլով,

ինչպէս որ կ'ուզէ երանի ձայնարկութիւնը, այն ատեն և զիրը կրնանք բացատրել իբր և զիմուռ յօդին ներկայութեան արդիւնը՝ որ դրուած է ուղղականին վրայ. Փրաւաշ։ Այս բառը ուշ մտաւ ժողովրդեան մէջ, հաւանօրէն յօղուածին սկիզբը մեր յիշած ժամանակին։ Թէ՛ այս բառը գիտական ծագմամբ երևան եկած է՝ կը հետևի անկից՝ որ պարսիկ ծագումով բառ մը հայ բառի փոխանցելով փ տառը հի չէ փոխուած։<sup>(4)</sup>

Այս պատեհաւ յիշենք բառն Հրոտից<sup>(5)</sup>, կամ լաւ եւս Հրոտից սեռականը՝ Հրոտը կամ Հրոտրդի, հայ ազգի հին տարւոյ վերջին ամսոյն անունը։ Այս բառը կ'ենթադրէ պարսկերէն *frort*, ծագած *fravartē*. հմտ. գենտ. *fravashinam* փրաւաշինեքու ամիսը (Բհշլ. *fravartin*)<sup>(6)</sup>։

Վերջին դիտողութիւն մըն ալ, իրանական հոգեբանութեան մէջ հինգ են հոգւոյ մասերն կամ լաւ եւս կարողութիւններն։ Հինգերորդն այսինքն յալվան՝ (բհհշլեկան լալվան) է մարդկային հոգին, նկատելով զանիկայի կարողութիւն ընտրութիւն ընելու բարիին և չարին մէջ և յաղթելով չարին իշխանութեան, յետ մահուան պիտի միանայ իր Փրաւաշիին հետ, որ է միանգամայն իմպետական էակներուն աստուածային տիպարը ու ինքնագոյ է, պզտոտնական զաղափարին նման։ Արդ այս տեսակէտով ալ նկատելով, հաղորդակցութեան շատ կէտեր եղած են ի մէջ քրիստոնէական և հեթանոսական իմաստասիրութեան և մասնաւորապէս այն երկիրներուն մէջ՝ ուր

(1) Երևի՝ կ'երևի որ Փրաւաշինբը աստղերուն հետ բոլորովին նոյնացած ըլլան. Հմտ. Hasting, Encyclopedia of religion and ethics (Vol. 6, pag. 118). The connexion of the Fravashis with the stars was probably a feature peculiar to Magian theology.

(2) Հմտ. Bartholomae Altiranisches Wörterbuch, Fravartay բառն առկ, և Zeiger-Kuhn - Grundriss der Iran. Philol.

(3) *Manichäische Studien von Carl Salemann* II. *Bekehrungsgeschichte Mémoires de l'Acad. d. St. VIII*, 10 (1908).

(4) Առնց և իրանեան զաւառաբարբառներէ փոխանութեան մասեր, տես Meillet, Sur les mots iraniens empruntés par l'Arménie (Extrait des M. S. L. P. t. XVII). էջ 8 et alibi.

(5) *Armenische Grammatik von H. Hübschmann*, էջ 104, և Meillet-ի *Esquisse*, էջ 13.

(6) Փրաւաշինբը իրանեան աստղութեան մէջ մեռելներու պիտեան ալ էին, որոնց ի գատիւ նուիրուած էին վերոյիշեալ ամիսէն հինգ օր. տես Zeiger և Kuhn, Grundriss der Iranischen Philologie. s. v.

գրիստոնէական գիտութիւնը պարսկական-  
նին հետ յարաբերութեան մէջ գտնուած  
էր կամ անոր ընդդիմադրած էր:

Վարդան Անգիլին խիստ շահագրգիռ  
երգը Աստուածութեան կուսաց վրայ (Եզե-  
կիէլ մարգարէին տեսած կառքը) իրեքկողորդ  
կոչմանը մէջ, յետ հռչակելու այս կառքը  
իր օրինակ և ընդունարան պարզ և անընդ-  
նելի էութեան և իմացականութեան՝ որուն  
հաղորդ են ամէն բանաւոր էակներ, իմաս-  
տասէր բանաստեղծը խօսքը կը վերջացնէ  
աղօթելով ի նպաստ քառազօր (այսինքն  
հանրական) զօրութեան, որպէս զի կարենայ  
բոլորովին կերպարանակից ըլլալ նախնա-  
կոն Տիգրանի միշտ և յաւիտեան<sup>(1)</sup>:

Այս ամենուն մէջ չկայ հաւատոյ հա-  
կառակ բան մը. և յիշատի միթէ ճշմարիտ  
չէ՞՝ թէ կանխաւ ամէն իրաց տեսակները  
ձանքին մէջ գոյութիւն ունին, և մարդն ալ  
նախասահմանուած էր առ բարին:

Խնդիրն աւելի աղօթքին բանաձևին մէջ  
կը կայանայ, որ իսկապէս պղատոնա-  
կան է և ըստ մեզի յարգի յիշատակարան  
մ'է և նշան մատենագրութեան մը՝ որ  
մինչև միջին դարուն կէտ շարունակեց, և  
այնուհետև ծառայեր է իբր անցքի կամուրջ  
պատկերներու և գաղափարներու՝ որոնք  
փոխանակուեցան ալ և ալ մշակոյթի շրջ-  
ջանակներուն մէջ, որոնք իրարմէ տար-  
բեր էին և գուցէ ոխերիմ ալ, բայց միշտ  
իրարու սահմանակից:

Ի տօնի իշխանացն

Սահակայ և Համադասկայ

Տոքթ. ԱՄՍՈՑ ԾԱՆՈՒԼԻ

Ուսուցչ. Յոյմ և Լատին լեզուաց

«Foscarini» Արք. Լիկէոնիմ

Թրգմ. Հ. Ե. ՍԵՐՈԿՆՍԿԻ



(1) Անգիլի վարդապետի Եզեկիէլ վասն  
կուսաց Աստուածութեան ներքոյ - ապ. Հ. Բ. Սարգիս-  
տեան Վրդ. Ս. Ղազար, 1919 թ. 10.

## ՀԱՅԿԱԲԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԻ ՅԻՍՈՒՍԵԱՆ

(Շար. տես 299)

ԱՊՐԵՆԻԹ Թէ ո՞վ էր Յակօր վարդապետս  
այս Յիսուսեան, յ՞նաւ նա յառաջնում  
աւուր Նոյեմբերին, 1656 ամի Տեառն ի  
Բար լը դուկ (Bar-le-Duc) քաղաքի Գաղ-  
ղիոյ, և յերկրորդում աւուր Հոկտեմբերին  
1673 ամի, եմուտ ի Կարգ. Յիսուսեան  
կրօնաւորաց: Յամին 1688 հրաման ստա-  
ցաւ գնալ ի Ջինաստան առաքելութեամբ՝  
եթէ սակայն ջանք այլոց Յիսուսեանց  
հասանել յայն աշխարհ ի դերև ելեալ  
էին: Ի 25 աւուր Սեպտեմբերին նոյն  
ամի՝ եմուտ Յակօր Վիլլօտ ի նաւ ի Մար-  
սելլ, դէմ եղեալ գնալ ի Տրապիզոն ընդ  
ճանապարհ Կոստանդնուպօլսոյ, և անցա-  
նելով ընդ Երզրում (Կարին) եհաս յերևան  
ի 6 Յունուարին յաջորդ 1689 տարուին:  
Գնաց անտի ի Գանձակ և յսկզբան մարտի  
ի Շամախի, ուր Յիսուսեանք յերկու ամաց  
հետէ հաստատեալ էին դպրոց մի, որպէս  
և յայլ տեղիս ի Հայս: Յընթացս դեգեր-  
մանն անդ ի Շամախի՝ որ տեհաց զամիսս  
հինգ՝ գնեալ եղև Յակօր վարդապետ ուս-  
ման Հայ, Տաճիկ և Պարսիկ լեզուաց, և  
անցանելով ընդ Կուր և Երասխ՝ յուղի ան-  
կաւ գնալ ի Պարսկաստան, և ընդ ճա-  
նապարհ Արտավիշում, Սուլթաննայ, Սա-  
վայի և Քաղանայ ժամանեցաւ յԱսպահան  
մայրաքաղաք Պարսից՝ զայնու ժամանակաւ  
ի 16 Հոկտեմբերին նոյն ամի: Չկարա-  
ցեալ ի ձեռս բերել զհրամանագիր գնալոյ  
ի Ջինաստան ի պատճառս մահուան դեռ-  
պանին Լեհաց յԱսպահան՝ հարկեցաւ Յա-  
կօր Վիլլօտ դառնալ յԵրոպա յամին 1690  
ընդ ճանապարհ Երևանայ, Կարնոյ  
և Տրապիզոնի: Այլ սակայն Յակօր Վիլլօտ  
չկարէր բնաւ հանգիստ մնալ, ուստի գզնի  
վեց ամաց յուղի անկաւ՝ գնալ վերստին  
ի Պարսկաստան, և յետ բազում դժուա-  
րութեանց զճանապարհայն՝ եհաս անփորձ  
ի մայրաքաղաք յԱսպահան՝ յամին 1696:  
Քանիցս ջանացաւ հասանել ի Ջինաստան,  
այլ որքան ջանացաւ՝ սակաւ օգտեցաւ,